ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/09

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Տ. Լաճիկյանի (Լիազորագիր՝ տրված 23.01.2019թ.)

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Ա. Պետրոսյանի (Լիազորագիր՝ տրված 24.01.2019թ.)

Բ. Հարությունյանի (Լիազորագիր՝ տրված 24.01.2019թ.)

Քննելով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար գնումների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացված և

21.01.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/09 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 21.01.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Սույն թվականի հունվարի 15-ին գնումների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հրավերում առկա են խտրական և չհիմնավորված պայմաններ, ինչն առաջացնում է անհավասար պայմաններ Ընթացակարգի հնարավոր մասնակիցների համար և անհիմն կերպով բարդացնում հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

«ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2.5-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված է, որ մասնակիցների՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար ներկայացվելիք համանման պայմանագրի առարկան պետք է հանդիսացած լինի էներգետիկայի ոլորտում գնումների գործընթացի կազմակերպման և խորհրդատվական ծառայությունները: Տվյալ դեպքում «էներգետիկայի ոլորտում» եզրույթը անհարկի սահմանափակում է հնարավոր մասնակիցների մասնակցությունը և անհավասար պայմաններ է ստեղծում ընթացակարգի մասնակիցների համար: Վերը նշված եզրույթը որևէ հիմնավորում և դրա կիրառումը հակասում է.

- ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 65-րդ կետին, որով սահանված է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության

նույն խմբերում: Տվյալ դեպքում նման եզրույթ պարունակող տնտեսական գործունեության խումբ գոյություն չունի.

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասին, որով սահմանված է, որ գնումների գործընթացը հիմնվում է 3 սկզբունքների վրա, այն է՝

1. գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2. պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3. ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն: Ակնհայտ է, որ «էներգետիկայի ոլորտ» եզրույթը խտրական է, չի խրախուսում մասնակիցների շրջանակի ընդլայնում՝ այլ ճիշտ հակառակը.

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, որով սահմանվում է, որ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին: Ակնհայտ է որ «էներգետիկայի ոլորտ» եզրույթը խտրական է և անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Հրավերում առկա պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, մասնավորապես.

- տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված է պահանջ, որ մասնակիցը պետք է ունենա առնվազն 5 (հինգ) գնումների համակարգող, որոնք ընդգրկված պետք է լինեն լիազորված մարմնի կողմից հրպարակվող գնումների որակավորված համկարգողների ցուցակում և որոնցից առնվազն մեկը պետք է ունենա առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ համպատասխան ոլորտում: Վերը նշված պահանջը հակասում է.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասին, որով սահմանվում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում: Տվյալ իրավանորմը, հստակ սահանում է այն հատկանիշները, որոնք ներառվում են գնման առարկայի բնութագրերում, իսկ տվյալ դեպքում պատվիրատուն գնման առարկայում սահմանել է պահանջ, որը վերաբերում է մասնակցի աշխատանքային ռեսուրսներին և դուրս է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված հատկանիշների շրջանակից.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին, որով սահմանվում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Տվյալ դեպքում մասնակցի առաջ աշխատանքային ռեսուրսներին մասով նման պահանջի սահմանումը չունի որևէ օբյեկտիվ հիմնավորում չի բխում այն նպատակից, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Տվյալ պարագայում մասնակից ինքը կարող է որոշել, թե քանի աշխատակցի է հանձնարարելու կատարել իր կողմից ստանձնված պարտավորությունները և իրավական որևէ նորմ չի սահմանում տվյալ ծառայության կատարման համար անհրաժեշտ նվազագույն աշխատանքային ռեսուրսների չափը.

ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 21-րդ կետի 1-րդ մասին համաձայն որի

«պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար,

բ. մասնակիցների որակավորման չափանիշները, այդ թվում՝

- «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ,

- շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության...»:

Ինչպես երևում է վերը նշված իրավանորմերի վերլուծությունից՝ պատվիրատուն «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջներ պետք է սահմանի նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ: Մինչդեռ Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից «ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգով ձեռք են բերվում պարզապես գնումների խորհրդատվական ծառայություններ:

Տվյալ դեպքում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջներ սահմանելը իրավաչափ չէ:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով ընթացակարգը:

«Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.01.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն 23.01.2019թ. թիվ 01/50-19 գրությամբ հայտնել է, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման վերջնաժամկետ էր սահմանվել 22.01.2019թ. ամը 10:00-ն, որին որևէ հայտ չի ներկայացվել և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետի գնման ընթացակարգը հայտարարվելու է չկայացած:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.01.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար գնումների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով նախատեսվել է, որ ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում էներգետիկայի ոլորտում գնումների գործընթացի կազմակերպման և խորհրդատվական ծառայությունների մատուցված լինելը:

3. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով որպես պահանջ նախատեսվել է, որ մասնակիցը պետք է ունենա առնվազն 5 (հինգ) գնումների համակարգող, որոնք ընդգրկված պետք է լինեն լիազորված մարմնի կողմից հրապարակվող գնումների որակավորված համակարգողների ցուցակում և որոնցից առնվազն մեկը պետք է ունենա առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

3. Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

4. Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-

րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Կարգի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3)....»

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար գնումների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով նախատեսվել է, որ ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ***էներգետիկայի ոլորտում գնումների գործընթացի կազմակերպման և խորհրդատվական ծառայությունների մատուցված լինելը:***

Ուսումնասիրելով հրավերի նշված պահանջը, գտնում եմ, որ այն հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, մասնավորապես Կարգի 65-րդ կետին և կարող է հանգեցնել ընթացակարգին մասնակիցների շրջանակի սահմանափակման, ինչպես նաև մասնակիցների՝ ընթացակարգին մասնակցելու իրավունքի իրացման խոչընդոտների ստեղծման:

Դրա հետ մեկտեղ Հրավերով նախատեսվում է ձեռքբերել գնումների վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ և տվյալ դեպքում գնումների խորհրդատվական ծառայության նեղ ոլորտի (էներգետիկայի ոլորտ) նախատեսումը չի կարող դիտարկվել որպես իրավաչափ նաև այն պատճառով, որ գնումների մասին ՀՀ օրենդրությունն

ամրագրում է գնումների կարգավորման ընդհանուր իրավական դաշտը և չի առանձնացնում առանձին հատուկ կանոններ այս կամ այն ոլորտի գնումների համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Անդրադառնալով բողոքի երկրորդ հիմքին՝ արձանագրում եմ հետևյալը.

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով որպես պահանջ նախատեսվել է, որ մասնակիցը պետք է ունենա առնվազն 5 (հինգ) գնումների համակարգող, որոնք ընդգրկված պետք է լինեն լիազորված մարմնի կողմից հրապարակվող գնումների որակավորված համկարգողների ցուցակում և որոնցից առնվազն մեկը պետք է ունենա առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում:

Հրավերի 2-րդ կետի 2.4-րդ կետով նախատեսվել է, որ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Միևնույն ժամանակ հրավերի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի 4-րդ պարբերությամբ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի տակ նախատեսված «ա» պարբերությամբ սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին:

Դրա հետ մեկտող «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով առանձին պահանջներ չեն նախատեսվել հրավերով:

Կարգի 64-րդ կետը սահմանում է, որ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավո-րումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանա-կահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3) եթե գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկան անշարժ գույք է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված է, որ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Ուսումնասիրելով վերոհիշյալ նորմերը և համադրելով դրանք Ընթացակարգի հրավերով սահմանված քննարկվող պահանջի հետ, արձանագրում եմ, որ հրավերով Կարգի 64-րդ կետի համաձայն «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի նախատեսված չլինելու պայմաններում, Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տեխնիկական բնութագիր-գնման ժամակացույցով չի կարող նախատեսվել իր բնույթով «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշ հանդիսացող պահանջը: Այն պետք է նախատեսվի համաձայն Կարգի 64-րդ կետի:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ հրավերով նախատեսված «մասնակիցը պետք է ունենա առնվազն 5 (հինգ) գնումների համակարգող, որոնք ընդգրկված պետք է լինեն լիազորված մարմնի կողմից հրպարակվող գնումների որակավորված համկարգողների ցուցակում և որոնցից առնվազն մեկը պետք է ունենա առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ համպատասխան ոլորտում» պահանջը չի կարող նախատեսվել տեխնիկական բնութագրում, այլ պետք է ներառված լինել Կարգի 64-րդ կետով սահմանված կարգով «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի տակ, որը տվյալ դեպքում հրավերում բացակայում է:

Նման պայմաններում գտնում եմ, որ բողոքը սույն մասով նույնպես ենթակա է բավարարման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ համաձայն Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվության

«ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի՝ Armeps համակարգով նախատեսված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո որևէ հայտ չի ներբեռնվել համակարգ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. Պարտավորեցնել «ԵՋԵԿ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**